354

1. Լայնածավալ այս աշխարհում
Մարդիկ թշվառ են, խեղճ, տրտում:
Լաց ու արցունք, սով, փոթորիկ՝
Բաժինն են մեծ ու փոքրի:
Սրտերն են դառը՝ ցավով պատած,
Ապագան է անհայտ երազ,
Սև ամպերով պատած երկինք,
Տագնապի մեջ՝ բոլոր մարդիկ:

Ո՛վ Տեր Հիսուս, արի՛ շուտով,
Մեր կյանք՝ հանգիստ և ապահով,
Քեզ ենք կարոտ, ո՛վ Տեր Հիսուս:
Ո՛վ Տեր Հիսուս, ո՛վ Տեր Հիսուս,
Արի՛ շուտով:

2. Լսեք ձայնը՝ մեղմ ու քաղցրիկ,
Տարածե՛ք խոսքը անուշիկ,
Ժամանակն է սուղ, թանկագին,
Շուտով կգա Աստծո Որդին:
Արթուն կացե՛ք՝ պատվերն է Իր:
Հասավ ժամը փառաց լույսի,
Վե՛ր նայեցեք դուք ամպերին,
Տեսե՛ք, ահա՛ Աստծո Որդին:

3. Նա է լույսը մեր փառավոր,
Կբուժի մեր ցավերը բոլոր:
Կամոքի վիշտը սրտերի,
Կսրբի արցունքներն աչքերի:
Նեղությունները կվերջանան,
Ուրախությամբ մենք ընդունենք,
Հիացումով Նրան նայենք
Եվ Իր շուրջը մենք բոլորենք:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025